ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

ՏԱԹԵՎԻԿ ԵՆՈՔՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ դասախոս
yenokyant@gmail.com

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԻՐԱԴՐԱՅԻՆ ԽԱՂԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Բանալի բառեր. խաղեր, իրադրային խաղեր, հաղորդակցական կարողություններ, կրտսեր դպրոցական, բանավոր և գրավոր խոսք:

Ключевые слова: игры, ситуационные игры, коммуникативные навыки, младшая школа, устная и письменная речь.

Key words: games, casual games, communication skills, junior school, oral and written speech.

Վեց տարեկան առաջին դասարանցին գտնվում է անցումային փուլում՝ նախադպրոցական տարիքից (անձնային, հոգեբանական որակներն առավել հեշտ և լավ ձևավորվում են խաղային գործունեության մեջ) դեպի կրտսեր դպրոցական տարիք, որտեղ առաջատար գործունեությունը դառնում է ուսումնականը, սակայն անցումը պետք է իրականացվի քայլ առ քայլ, փուլերով:

Դպրոցական դարձած փոքրիկները հայտնվում են կենսագործունեության երկու խաչմերուկում, ուր հմտորեն պետք է միակցվեն խաղը, որը նախադպրոցական տարիքի երեխայի գործունեության հիմնական ձևն է, և ուսումնական գործունեությունը, որը կրտսեր դպրոցականի գործունեության գլխավոր ուղղությունն է: Ընդ որում, խաղը դիտարկվում է որպես առաջատար գործունեություն ոչ այն պատճառով, որ այն երեխայի կյանքում ամենամեծ տեղն է գրավում, և որին երեխան օրվա մեծ ժամանակն է տրամադրում, այլ որովհետև խաղի զարգացումը երեխայի հոգեկանում առաջացնում է փոփոխություններ. զարգանում են հոգեկան այն գործընթացները, որոնք անհրաժեշտ են զարգացման նոր, առավել բարձր աստիճանի անցնելու համար: Խաղում են ծնվում զարգացման հաջորդ փուլի՝ ուսումնական գործունեության տարրերը: Ռուս մանկավարժ Վ. Վոլիանան համոզված է, որ հաճախ դպրոցականների ցածր գրագիտության պատճառներից մեկն էլ այն է, որ տարրական դպրոցում ըստ անհրաժեշտության ուշադրություն չի դարձվում խաղային մեթոդներին, և անցումն ուսումնական գործունեությանը

կատարվում է միանգամից, ինչի հետևանքով մայրենի լեզուն հաճախ երեխաների համար դառնում է չոր և ձանձրալի՝ կազմված միայն ուղղագրությունից և կետադրական նշաններից[1]: Աշակերտներն ուսումնական գործունեության ժամանակ խաղի միջոցով հաճույքով և հիմնարար են յուրացնում գիտելիքները, ձեռք են բերում կարողություններ և հմտություններ: Սովորելու և խաղալու ցանկությունը ողջ կրտսեր դպրոցական տարիքում զուգորդվում է, և դժվար է որոշել, թե ո՛ր գործունեության ձգտումն է գերիշխում այդ տարիքի երեխաների մեջ:

Ջ. Գյուլամիրյանը[2] նշում է, որ երեխային նախապատրաստել ուսումնական գործունեության նշանակում է տարբեր ճանապարհներով և բազմազան միջոցներով օժանդակել, որ ավագ նախադպրոցականը ձեռք բերի մտածողական գործողություններ կատարելու որոշակի ունակություններ՝ անհարժեշտ մակարդակով առանձնացնել և դասավորել իրեն շրջապատող ծանոթ առարկաներն ու երևույթները, պլանավորել գործողությունները և ըստ պլանավորման՝ իրականացնել, վերահսկել իր գործունեությունը, կառավարել վարքը, զգալ իր քայլերի պատճառահետևանքային կապերը, ուշադիր լսել և կատարել ավագների հանձնարարությունները, գնահատել իր գործունեությունը, հաղորդակցվել տարեկիցների հետ, դրսևորել փոխօգնություն, ապրումակցման որակներ և այլն: Կատարելագործվում են խաղային գործողությունները: Նոր ձեռքբերած փորձի շնորհիվ բարդանում են խաղերի բովանդակությունը և կառուցվածքը[3]: Պայմանավորված կրտսեր դպրոցական տարիքային փուլերով՝ փոխվում են խաղերը՝ դառնալով առավել բազմազան, ավելի ինտելեկտուալ և իրականացման քայլերի իմաստով ավելի բարդ[4]:

Խաղն ուսուցման գործունեության ձևերից մեկն է, որի մեջ վերաստեղծվում և ձևավորվում է երեխայի ինքնատիրապետումն ու պահվածքը ինչպես գտնում է Ս.Ա. Մուխինան[5], խաղը միշտ իրականացվում է ինքնակամ, ներառում է մրցակցության տարրեր, մասնակիցներին հաճույք է պատճառում և օգնում է ինքնահաստատվել: Երեխան խաղերի միջոցով կրկնում է մեծերի գործունեությունը և խաղալով

---

[1] Волина В. В. Веселая грамматика.– М.: Знание, 1995, с. 3.

[2] Գյուլամիրյան Ջ.Հ., Խաղալով սովորենք, -Եր., Զանգակ -97, 2009թ., էջ 5:

[3] Թունյան Ջ.Ե., Երիցյան Լ.Մ., Կրտսեր դպրոցականի հոգեբանություն, -Եր., Էն-Վե պրինտ,
2013թ., էջ 132

[4] Գյուլամիրյան Ջ.Հ., Խաղալով սովորենք, -Եր., Զանգակ -97, 2009թ., էջ 8

[5] Мухина С. А., Соловьева А. А. Современные инновационные технологии обучения. М.: ГЭОТАР-Медиа 2008., с. 25

իր վրա է վերցնում նրանց սոցիալական դերը՝ այն ներկայացնելով խաղային գործողություններով: Ժ.Ժ. Ռուսոն կարծում էր, որ «Երեխան պարապում է թե զվարճանում, նրա համար համարժեք գործունեություն է. նրա խաղերը նրա պարապմունքն են, նա չի զգում խաղի և պարապմունքի տարբերությունը»[6]:

Ժամանակակից դպրոցում խաղային գործունեությունն դիտարկվում է որպես ինքնուրույն տեխնոլոգիա, որպես մանկավարժական տեխնոլոգիայի տարր, դասի ձև կամ նրա մասը, նաև՝ արտադասարանային աշխատանքներում: Խաղի տեղը և դերը, նրա տարրերը ուսուցման գործընթացում մեծամասամբ պայմանավորված են ուսուցչի կողմից խաղի գործառույթի ընկալումով: Մեր ուսումնասիրությունների ընթացքում իրականացրած մայրենիի դասերի դիտումները, ուսուցիչների շրջանում հարցումները մեզ բերեցին այն եզրակացության, որ շատ հաճախ ուսուցիչները խուսափում են խաղային տեխնոլոգիաներ կիրառել դասերին, քանի որ խաղի միջոցով դժվար են հասնում նպատակին: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ ուսուցիչների մեծ մասը դժվարանում է խաղերը կազմելիս հստակ ձևակերպել նպատակը: Հարցված ուսուցիչների մի մասն էլ գտնում է, որ երբեմն դժվարանում են դասերի ժամանակ խաղերն ըստ գրված նպատակի կիրառել: Այսինքն՝ խաղը չեն կարողանում կապել դասանյութի հետ, այդ պատճառով էլ չեն կիրառում: Այստեղից կարելի է հետևություն անել, որ խաղը չեն դիտարկում որպես ուսուցման մեթոդ: Մինչդեռ խաղային գործունեությունն իր մեջ ներառում է այնպիսի խաղեր ու վարժություններ, որոնք ձևավորում են երեխայի վերլուծելու, համեմատելու, համադրելու ունակություններն ու կարողությունները, զարգացնում են ինքնատիրապետումը, տարածության մեջ արագ կողմնորոշումը, լսողական ընկալումը, տրամաբանությունը, ինչպես նաև նպաստում են հաղորդակցական կարողությունների և հմտությունների զարգացմանը:

Առանձնացնվում են խաղերի հետևյալ տեսակները՝ հետաքրքրաշարժ, շարժուն, դիդակտիկական, տրամաբանական, մտավոր, շտկողական, իրադրային, կառուցողական, հոգեբանական, համակարգչային և այլն: Խաղերի գրեթե բոլոր տեսակները կիրառելի են տարրական դասարաններում:

Իրադրային խաղերն առանձնակի նշանակություն ունեն հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացում:

[6] Руссо Ж. Ж., Эмиль, или О воспитании Педагогические сочинения: В 2 т. / Под ред. Г. Н. Джибладзе. М.: Педагогика, 1981. Т. 1., с.183

Իրադրային խաղերում ներկայացվում են իրավիճակներ, և աշակերտները, ըստ իրավիճակի, պետք է կարողանան կազմել կապակցված խոսք՝ ներկայացնելով երկխոսություններ և մենախոսություններ: Իրադրային խաղերի կազմակերպման ժամանակ աշակերտներին առաջարկվում է տարբեր ստեղծագործություններից կամ այլ իրադրություններից ընտրել զանազան դերեր, խաղալ կամ կազմել խոսքային դրվագներ: Ընտրված խոսքային դրվագները, որպես կանոն, պրոբլեմային են և յուրաքանչյուր մասնակից ստանձնում է որևէ դեր: Շատ հաճախ առաջարկված իրավիճակների լուծումներն աշակերտները տալիս են՝ հիմվելով իրենց կենսափորձի վրա: Ուստի իրադրային խաղերը կազմելիս կարևոր է հաշվի առնել աշակերտների տարիքային և անհատական առանձնահատկությունները, ուսումնական առարկայի առանձնահատկությունները: Հետևաբար անհրաժեշտ է մանրամասն մշակել իրադրային խաղերի իրականացման նպատակները, պայմանները: Այսինքն՝ իրավիճակների լուծման համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մանկավարժական պայմաններ, որոնք կմղեն աշակերտներին հաղորդակցվել, դատողություններ, քննադատություններ կատարել, ստեղծագործել:

Մայրենիի դասերին իրադրային խաղերը նպատակահարմար է կազմակերպել ինչպես ուսումնական նյութի ուսումնասիրման իմաստավորման փուլում, այնպես էլ կշռադատման փուլում:

Ներկայացնենք իրադրային խաղերի մի քանի օրինակներ, որոնք իրականացրել ենք մեր փորձարարական դասերի ընթացքում (ՀՊՄՀ թիվ 57, «Վարդանանք» կրթահամալիր, Արտաշատի թիվ 4 հիմնական դպրոց).

1-ին դասարան

Խաղ 1. Հաղորդում. խաղի նպատակն է զարգացնել աշակերտների բանավոր խոսքը և հաղորդակցվելու կարողությունները: Խաղի կահավորման համար պատրաստել էինք բարձրախոս: Խաղի մասնակիցներին նստեցրել էինք շրջանաձև: Ուսուցիչ. «Պատկերացրե՛ք՝ «Կենդանիների աշխարհում» հաղորդման հյուրն ենք և պետք է պատմենք մեր սիրելի կենդանու մասին»: Հստակ և համակարգված խոսելու նպատակով ուսուցիչը հնչեցրեց այն հարցերը, որոնց շուրջ աշակերտները պետք է ձևակերպեն իրենց բանավոր խոսքը.

- ո՞րն է քո սիրելի կենդանին,
- ինչպե՞ս ես նրան խնամում:

Որպես խոսքի նմուշ՝ ուսուցիչն առաջինը ինքն պատմեց, որից հետո աշակերտները հաջորդաբար պատմեցին իրենց սիրելի կենդանու մասին:

Խաղ 2. Գտի՛ր տարբերությունը. խաղի նպատակն է զարգացնել ուշադրությունը, համեմատելու, հակադրելու և հաղորդակցական կարողությունները: Խաղի կահավորման համար պատրաստել էինք

նկարներ։ Խաղի մասնակիցները բաժանվեցին 4 խմբի։ Ուսուցիչ. «Երեխանե՛ր, ձեզ տալիս եմ նկարների զույգեր, դուք պետք է ուշադիր դիտեք նկարները և որոշեք դրանց նմանություններն ու տարբերությունները։ Աշխատանքն ավարտելուց հետո յուրաքանչյուր խումբ ներկայացնում է արդյունքները»։ Հատկանշական էր այն, որ աշխատանքի արդյունքներն ամփոփելիս խմբերից մեկը նկարներում պատկերված նմանությունները և տարբերությունները ներկայացրեց փոքրիկ պատմությամբ։ Ներկայացնենք կազմած պատմությունը (ՀՊՄՀ թիվ 57 դպրոցի փորձարարական 1-ին դասարան). «Կար չկար մի չարաճճի բադիկ կար։ Նա առաջին անգամ էր լողում լճակում։ Մայր բադիկը ցույց էր տալիս, թե ինչպես տոտիկը շարժի, որ լողա։ Չարաճճի բադիկը շատ էր ուրախացել, ուրախությունից աչիկները փակել էր և բարձր ձայնով ասում էր՝ ղո՛ւ-ղո՛ւ։ Նրա ձայնից թիթեռնիկը վախեցավ և փախավ»։

Խաղ 3. Մնջախաղ. խաղի նպատակն է առանց խոսքերի հաղորդակցման, ժեստերի, դիմախաղի օգնությամբ արտահայտվելու կարողության զարգացումը։ Խաղի կահավորման համար պատրաստել էինք քարտեր, որոնց վրա գրված էին բառեր և բառակապակցություններ։ Խաղի մասնակիցները բաժանվեցին 2 խմբի։ Ուսուցիչ. «Յուրաքանչյուր խմբի տալու եմ քարտեր, որոնց մեջ գրված են բառեր և բառակապակցություններ, պետք է կարդաք և փորձեք առանց խոսքերի՝ ժեստերի և դիմախաղի օգնությամբ հաղորդեք հակառակորդ խմբին։ Բառը կամ բառակապակցությունը ճիշտ կռահելու դեպքում խումբը կստանա մեկ միավոր։ Կհաղթի այն թիմը, որն առավել շատ միավորներ կհավաքի»։ Քարտ 1՝ ծաղիկ, մեքենա վարել, ցատկոտել, բանալի, երգել, խնձոր, քարտ 2՝ գիրք, պահարան, գրել, ուշադիր լսել, քարտեզ, ուղղաթիռ։

Խաղ 4. Թեմատիկ նկարներ. Խաղի նպատակն է զարգացնել աշակերտների համագործակցային, բանավոր կապակցված խոսք կառուցելու կարողությունները։ Խաղի կահավորման համար նախապատրաստել էինք դրվագային թեմատիկ նկարներ։ Խաղի մասնակիցները բաժանվեցին 4 խմբի։ Ուսուցիչ. «Յուրաքանչյուր խումբ կստանա 1 դրվագային նկար, որի շուրջ պետք է հյուսի պատմություն։ Աշխատանքի ավարտից հետո յուրաքանչյուր խումբ ներկայացնում է հյուսած պատմությունը, և միասին որոշում ենք նկարագրված դրվագների հերթականությունը»։

2-րդ դասարան

Խաղ 1. Արի՛ խոսենք. Խաղի նպատակն է երկխոսություն, բանավոր հակիրճ խոսք կառուցելու, համագործակցելու կարողությունների զարգացումը։ Խաղի կահավորման համար նախապատրաստել էինք իրավիճակային նկարներ։ Խաղի մասնակիցները բաժանվեցին զույգերի։

Ուսուցիչ. «Տրված իրավիճակային նկարների շուրջ կազմե՛ք երկխոսություն և այն ներկայացրե՛ք դերային խաղով»:

Խաղ 2.Ի՞նչ կլինի, եթե. խաղի նպատակն է երևակայության, ստեղծագործական մտածողության, բանավոր կապակցված խոսք կառուցելու կարողության զարգացումը: Խաղի կահավորման համար նախապատրաստել էինք հեքիաթների հերոսների նկարներ: Խաղի մասնակիցները բաժանվեցին 4 խմբի: Ուսուցիչ. «Մեզ ծանոթ են Անբան Հուռին, Քաջ Նազարը, Գնդլիկ Բոքոնիկը: Պատկերացրե՛ք, որ նրանք հանդիպել են իրար նույն հեքիաթում, ինչպիսի՞ ընթացք կունենա հեքիաթը»:

Խաղ 3. Հորինի՛ր հեքիաթ. խաղի նպատակն է զարգացնել աշակերտների երևակայությունը, ստեղծագործական միտքը, գրավոր և բանավոր խոսք կառուցելու կարողությունը, բառապաշարի զարգացումը, հաղորդակցական հմտությունները: Խաղի կահավորման համար պատրաստել էինք թեմատիկ քարտեր: Խաղի մասնակիցները բաժանվեցին 4 խմբի: Ուսուցիչ. «Քարտերի վրա գրված են բառեր և բառակապակցություններ: Յուրաքանչյուր խումբ պետք է հորինի հեքիաթ և գրի»:

Քարտ 1. *գարուն, բազմերանգ ծաղիկներ, թռչունների դայլայլ, պայծառ արև,*

քարտ 2. *որսորդ, բրդոտ արջ, անտառ, սաղարթախիտ ծառեր,*

քարտ 3. *էքսկուրսիա, կենդանաբանական այգի, մի խումբ երեխաներ, հրաշալի օր,*

քարտ 4. *բերքահավաք, գյուղ, մրգաշատ այգի, ժիր մանուկներ:*

3-րդ դասարան

Խաղ 1. Դիմախաղ. խաղի նպատակն է զարգացնել աշակերտների ոչ խոսքային հաղորդակցական կարողությունները: Խաղի կահավորման համար նախապատրաստել էին քարտեր, որոնց վրա գրված էին զգացմունք արտահայտող բառեր: Խաղի մասնակիցները բաժանվեցին 2 խմբի: Ուսուցիչ. «Քարտերի վրա գրված են զգացմունքներ արտահայտող բառեր, պետք է դիմախաղով ցուցադրեք այդ զգացմունքները և բացատրե՛ք, թե ինչպես եք հասկանում քարտերի վրա գրված բառերը: Փորձե՛ք նկարագրել, թե ի՛նչ են նշանակում այդ հատկանիշները, ո՞ր իրավիճակներում դրանք կարող են առաջանալ»: Քարտ 1՝ ուրախություն, տխրություն, վիրավորանք, ոգևորություն, վախ, հաճույք, զայրույթ, ամոթ, քարտ 2՝ հիացմունք, երախտագիտություն, զարմանք, բարկություն, զզվանք, թեթևություն, անհամբերություն, թախիծ:

Խաղ 2.Կանաչ նպաստակ. խաղի նպատակն է զարգացնել աշակերտների բանավոր և գրավոր կապակցված խոսքը, հաղորդակցական

կարողությունները, երևակայական և ստեղծագործական մտածողությունը: Խաղի կահավորման համար նախապատրաստել էինք գունավոր մատիտներ և թուղթ: Խաղի մասնակիցները բաժանվեցին 4 խմբի: Ուսուցիչ. «Պատկերացրե՛ք՝ մեր դասարան է եկել մի կանաչ նապաստակ, դուք պետք է նկարեք կանաչ նապաստակին և հորինե՛ք երկխոսություն նապաստակի և ձեր միջև: Արդյունքը ներկայացրե՛ք դերային խաղով»:

*Խաղ 3. Իրավիճակ.*խաղի նպատակն է զարգացնել աշակերտների հաղորդակցական կարողությունները, քննադատական մտածողությունը, պասիվ բառապաշարի ակտիվացումը: Խաղի կահավորումը՝ ՏՀՏ միջոցներ՝ տեսանյութը ցուցադրելու համար: Ուսուցիչ. «Դիտելու ենք «Անբան Հուռին» մուլտֆիլմից մի հատված և քննարկելու ենք Հուռիի արարքը՝ փորձելով խորհուրդներ տալ»[7]:

4-րդ դասարան

Խաղ 1. Եկե՛ք ստեղծագործենք. խաղի նպատակն է զարգացնել աշակերտների բանավոր և գրավոր կապակցված խոսք կառուցելու կարողությունը, պասիվ բառապաշարի ակտիվացումը, ստեղծագործական և երևակայական մտածողության զարգացումը: Խաղի կահավորման համար նախապատրաստել էինք ճերմակ թղթեր և գրիչներ: Խաղի մասնակիցները բաժանվեցին 4 խմբի: Ուսուցիչ. «Եկե՛ք մտածենք՝ ինչ բովանդակություն է թաքնված «Անհնազանդ գայլուկը» վերնագրի տակ: Աշխատանքի ավարտից հետո յուրաքնաչյուր խումբ կներկայացնի իր կատարածը, որից հետո կկարդանք, թե ինչ բովանդակություն է թաքնված: Կքննարկենք, թե որ խմբի հորինած պատմություն է մոտ իրական բովանդակությանը»: Նախանշված ժամանակի ավարտից հետո խմբերը սկսեցին ներկայացնել իրենց հորինած պատմությունները: Այնուհետև կարդացինք բնագիրը և քննարկեցինք, թե որ խմբի կազմած պատմությունն էր առավել մոտ բնօրինակին:

Խաղ 2. Դերային խաղ. խաղի նպատակն է զարգացնել աշակերտների հաղորդակցական կարողությունները, բանավոր խոսքը, ստեղծագործական և երևակայական մտածողությունը: Խաղի կահավորման համար նախապատարաստել էինք գլխարկներ՝ կենդանիների նկարներով: Խաղի մասնակիցները բաժանվեցին խմբերի՝ յուրաքանչյուր խմբում 3 հոգի: Ուսուցիչ. «Պատկերացրե՛ք՝ կենդանիներ եք և ապրում եք անտառում, օրերից մի օր հանդիպում են աղվեսը, կապիկը, գայլը: Փորձե՛ք երևակայել, թե ինչ երկխոսություն տեղի կունենա նրանց միջև»: Տարբերակ 1՝ աղվես, կապիկ, գայլ, տարբերակ 2՝ շուն, առյուծ, նապաստակ, տարբերակ 3՝ օձ, գետաձի, սկյուռ:

[7] https://learningapps.org/display?v=pn0hic1nt19

Խաղ 3. Իրավիճակ. խաղի նպատակն է զարգացնել աշակերտների հաղորդակցական կարողությունները, քննադատական մտածողությունը, պասիվ բառապաշարի ակտիվացումը: Խաղի կահավորումը՝ ՏՀՏ միջոցներ՝ տեսանյութը ցուցադրելու համար: Ուսուցիչ. «Դիտելու ենք «Պույ-պույ մուկիկը» մուլտֆիլմից մի հատված, փորձելու ենք մխիթարել մուկիկին և մեր օգնությունն առաջարկել»[8]:

Վերոնշյալ իրադրային խաղերը մեր կողմից կազմված մեթոդական համակարգում ընդգրկված խաղերի մի մասն է, որոնք կիրառել ենք ինչպես մայրենիի, այնպես էլ «Խոսք և հաղորդակցում» դասաժամերին:

Աշակերտները հաճույքով էին ներգրավվում իրադրային խաղերում, ակտիվորեն մասնակցում էին քննարկումներին: Մեզ համար երբեմն դժվարություն էր խաղի մասնակիցների ընտրությունը, քանի որ կային խաղեր, որտեղ անհրաժեշտ էր 3-4 կերպար: Առաջացած դժվարությունը փորձում էինք լուծել հետևյալ կերպ. կազմում էինք 3-4 հոգուց բաղկացած խմբեր, և հանձնարարված խաղը ներկայացնում էին տարբեր խմբերով, կամ իրականացնում էինք հարցախույզ, և հարցերին ճիշտ պատասխանած աշակերտները մասնակցում էին խաղին:

Մեր կողմից իրականացրած ուսումնասիրությունների արդյունքում եկանք հետևյալ եզրահանգումների.

- կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացում կարևոր նշանակություն ունեն խաղերը, հատկապես իրադրային խաղերը, որոնք հնարավորություն են տալիս կրտսեր դպրոցականին տարբեր հաղորդակցական իրավիճակներում կապակցված խոսք կազմել և արտահայտվել,
- իրադրային բնույթի աշխատանքները կրտսեր դպրոցականները հաճույքով են կատարում և ակտիվ ներգարվվում են ուսուցման գործընթացում,
- իրադրային խաղերի, հաղորդակցական իրավիճակների կազմակերպումը նպաստում է ոչ միայն հաղորդակցական կարողությունների ձևավորմանը, այլ նաև քննադատական, ստեղծագործական մտածողության զարգացմանը, պասիվ բառապաշարի ակտիվացմանը, արտահայտամիջոցների կիրառմանը, մենախոսություն և երկխոսություն կազմելու կարողությունների ձևավորմանը,

[8] https://learningapps.org/display?v=p0xp8n0i319

- իրադրային խաղերը նպաստում են միմյանց հետ անկաշկանդ հաղորդակցվելուն, ինչպես նաև խմբում միաժամանակ աշխատելուն:

Տ. Ենոքյան

Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորումը իրադրային խաղերի միջոցով

Ամփոփում

Հոդվածում ներակայացված են կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացում իրադրային խաղերի դերը և նշանակությունը: Հանրակրթական մի շարք դպրոցներում (ՀՊՄՀ թիվ 57, «Վարդանանք» կրթահամալիր, Արտաշատի թիվ 4 հիմնական դպրոց) իրականացված փորձարարական դասերին կիրառվել են մեր կողմից կազմված իրադրային խաղեր: Եկել ենք այն եզրահանգման, որ մայրենիի դասերին կազմակերպվող իրադրային խաղերը կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացում արդյունավետ միջոցներից են:

Т. Енокян

Формирование коммуникативных навыков у младших школьников с помощью ситуативных игр

Резюме

В статье представлены роль и значение ситуативных игр в процессе формирования коммуникативных навыков у младших школьников. Экспериментальные занятия, проводимые в ряде средних школ (АСПУ № 57, образовательный комплекс «Вардананк», Арташатская средняя школа № 4), использовались нами. Мы пришли к выводу, что ситуативные игры, организованные на уроках родного языка, являются эффективным средством формирования коммуникативных навыков у младших школьников.

T. Yenokyan

The formation of communication skills of junior schoolchildren Through situational games

Summery

The article presents the role and importance of situational games in the formation of communication skills of junior schoolchildren. During experimental classes in several secondary schools (ASPU No. 57, "Vardanank" educational complex, Artashat Secondary School # 4) were tested situational games made by

us. We have come to the conclusion that the situational games during Mother tongue classes are effective tools for the formation of communication skills of junior school children.

Խմբագրություն է ուղարկվել 11.07.19
Հանձնարարվել է գրախոսության 18.07.19
Տպագրության է հանձնարարվել 15.10.19